ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(առարկա)

Թեմա՝ Կենսաբանության դասընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորումը

Կազմեց՝

Քնար Հարությունյան Թելմանի

(անուն, ազգանուն, հայրանուն)

«Լիճքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Նունե Ջավադյան

«Կապանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

ԿԱՊԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. Արժեհամակարգ: Արժեհամակարգի կարևորությունը հանրակրթության բնագավառում.....5

1.2. Սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա ազդող գործոնները.....6

ԳԼՈՒԽ 2. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1. Ուսուցման դաստիարակչական ներգործությունը սովորողների անձի և արժեհամակարգի ձևավորման վրա.....7

2.2. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը կենսաբանություն առարկայի համատեքստում.....8

ՀԵՏՈԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ.....9

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հարափոփոխ աշխարհում տեղի ունեցող շրջափուլերը, տեղեկատվության ծավալի բազմապատիկ ավելացումը, կրթության նկատմամբ մարդկության պահանջների մեծացումը միշտ էլ եղել են արդիական:

Ժամանակի ընթացքում փոխվում են մարդկանց պահանջմունքները, աշխատանքի բնույթը և բարեփոխումները դառնում են անխուսափելի: Հանրակրթության ոլորտում կատարվող փոփոխությունները նպատակ ունեն բարելավելու, ապահովելու և իրականացնելու արդի պահանջներին համապատասխան գործունեություն:

Կրթության որակի բարելավումը բարդ և տարողունակ հասկացություն է, որի կարևորությունը շեշտադրվում է կրթությանն առնչվող տարբեր փաստաթղթերում: Կրթության որակով է պայմանավորված պետության, անհատի, հասարակության բարեկեցությունը: Կրթության նկատմամբ ոչ ճիշտ վերաբերմունքը վնասում է թե՛ հասարակությանը, թե՛ պետությանը:

Այս և մի շարք այլ խնդիրների լուծման արդիական մոտեցումներում առանցքային կմախքի դերը վերագրվում է աշակերտի գիտելիքի, կարողությունների և հմտությունների գնահատմանը և արժևորմանը:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Անձի ձևավորումը տեղի է ունենում արտաքին և ներքին պայմանների ազդեցությամբ, և այդ ազդեցությունների արդյունքում փոխվում է երեխայի վերաբերմունքն աշխարհի, հասարակության, բնության, շրջապատի և ինքն իր հանդեպ: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման, անձի ճիշտ զարգացման համար կրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի դեր ունեն բոլոր ուսումնական առարկաները:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Ներկայացնել, թե ինչ դեր ունի հանրակրթությունը սովորողի արժեհամակարգի ձևավորման և զարգացման մեջ: Ընդգծել «Կենսաբանություն» առարկայի կարևորությունը՝ սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման գործում:

Հետազոտական աշխատանքի խնդիրները: Կարևորել արժեհամակարգի ձևավորման նշանակությունը հանրակրթության բնագավառում, ուսուցման դաստիարակչական

ներգործությունը սովորողների անձի և արժեքային համակարգի ձևավորման վրա՝ «Կենսաբանություն» առարկային համատեքստում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքն ընդգրկում է ներածական մաս, որտեղ ներկայացված է թեմայի արդիականությունը, նպատակը և խնդիրները: Հիմնական մասը բաղկացած է գլուխներից, ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1. Արժեհամակարգ: Արժեհամակարգի կարևորությունը հանրակրթության բնագավառում

Արժեքն աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և տեղեկատվության, այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժության մեջ ընկալվում է լայն իմաստով: Ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային արժեքների համախումբ է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Աճող սերնդի դաստիարակությունն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Կրելով վերը նշված հանգամանքների ներգործությունը, յուրացնելով դրանց ազդեցությունը՝ սովորողները հաղորդակցվում են հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև անհատականություն:

Հաշվի առնելով այս բոլոր ներգործությունները՝ կրթության հենքը և իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի այն օրինակելի տարածքը, ուր հաստատուն են սահմանված նորմերը, որտեղ սովորողները սովորում են համապատասխանել դրանց:

Դպրոցական կյանքը երեխայի համար չի կարող լինել հեշտ: Նա պետք զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Դպրոցում սովորողները պետք է ընկալեն համակեցության կանոնների իմաստը և ընդունեն դրանք: Այս ամենի արդյունքը կլինի իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արված, բայց ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Ամենալավ կրթական համակարգ կունենանք այն դեպքում, երբ կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ՝ մատաղ սերնդի համար:

1.2. Սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա ազդող գործոնները

Սովորողների արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները՝ սովորողի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը՝ ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Սովորողների արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողների արժեքային կողմնորոշումները, նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են տարիքային առանձնահատկությունների հիման վրա:

Արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է սովորողի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից սովորողների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացումի ձևավորումն է:

Արժեքների ձևավորման վրա ազդող գործոն է նաև միջանձնային հարաբերությունները կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Սովորողները նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական, այդպես էլ բացասական ընկալումներ: Բացասական ընկալումները հակում ունեն ձևավորելու անդառնալի ազդեցություն՝ սովորողների անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ անհրաժեշտության՝ միջամտություն:

ԳԼՈՒԽ 2

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

2.1. Ուսուցման դաստիարակչական ներգործությունը սովորողների անձի և արժեհամակարգի ձևավորման վրա

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը գիտակցությունից դուրս և նրանից անկախ գոյություն ունեցող օրինաչափություն է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հիմքը բուն գործընթացի բովանդակությունն է, որովհետև ընտրելով դաստիարակչական հիմնական գաղափարներ, օրենքներ և հասկացություններ՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով սովորողների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական արժեքներ:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում սովորողների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ սովորողները սովորում են կենտրոնացնել ուշադրությունը, դժվարությունները միասին հաղթահարել, միասին հաջողությունների հասնել, լսել կարծիքներ և այլն:

2.2. Սովորողների արժեհամակարգի ձևավորումը կենսաբանություն առարկայի համատեքստում

Արժեհամակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և այն մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Հանրակրթական յուրաքանչյուր առարկա յուրովի է ազդում սովորողների աշխարհայացքի, անձի և արժեքային համակարգի ձևավորման վրա: Այդ առարկաների շարքում իրենց առանձնահատուկ տեղն ու դերն ունեն բնական գիտությունները՝ մասնավորապես՝ կենսաբանությունը:

Կենսաբանության դասընթացը նպատակ է հետապնդում դաստիարակել կենսաբանական և էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձ, ով կգիտակցի կյանքի, որպես Երկրի վրա բարձրագույն արժեքի նշանակությունը և կկարողանա բնության հետ իր հարաբերությունները կառուցել կյանքի, մարդու և շրջակա միջավայրի նկատմամբ հարգանքի հիման վրա, լինել հասարակության և ինքն իր հետ ներդաշնակ:

Սովորողների արժեքային համակարգում կենսաբանության ուսումնասիրման շրջանակում մեծ տեղ է գրավում էկոլոգիական և բնագիտական դաստիարակությունը:

Էկոլոգիական դաստիարակությունը պետք է սկսվի նախադպրոցական տարիքից: Սովորողների մոտ պետք է ձևավորել էկոլոգիական գիտակցություն՝ տալով նրանց բնության մասին գիտելիքներ՝ առօրյա կյանքում, բնության գրկում, դասերի և էքսկուրսիաների միջոցով: Սովորողը պետք է տեղեկացված լինի և գիտակցի, որ ինքը բնության մի մասնիկն է, ծագել է բնությունից և սերտ կապերով կապված է շրջական միջավայրի հետ:

Բնությունը մարդուն տալիս է այն ամենը, ինչ անհրաժեշտ է մարդուն, և մարդն էլ իր հերթին պետք է ուշադրություն դարձնի նրա մաքրությանն ու պահպանմանն այնպես, ինչպես հոգ կտանի իր և իր ընտանիքի, տան ու բակի մաքրությանն ու պահպանությանը:

Մարդն ամեն քայլափոխի իր մտածված ու խելացի արարքներով պետք է նպաստի բնության պահպանությանը:

Ինչի՞ համար ենք մենք ապրում աշխարհում: Ո՞րն է կյանքի իմաստը: Հարցերը, որոնց պատասխանները տալուց, մեզանից յուրաքանչյուրը մտածում է իր հարազատների

և ընկերների մասին, թե ի՞նչ օգուտ կտանք մեր հարազատներին, ծանոթներին կամ անծանոթ մարդկանց:

Մարդիկ պետք է սկսեն գիտակցել վտանգը, որը կրում է բնության ոչնչացումը, որ հաճախ իրենց անմիտ և անպատասխանատու գործողություններով իրենք են կործանում այն գեղեցկությունը ու հարստությունը, որն ունենք, որով հիանում ենք և ուզում ենք հիանալ Աստծու տված ամեն օր:

Այս գիտակցությունը ձևավորելու արդյունքում սովորողը կունենա դրական վերաբերմունք կենդանի բնության նկատմամբ, կարժևորի այն, իր կարողությունների սահմանում կիրականացնի գործողություններ, որոնք միտված կլինեն բնության պահպանության:

Իմանալով իր ծագման (բնությունից) և զարգացման (էվոլյուցիա) մասին, նա կհետևի իր սննդակարգին, ֆիզիկական ակտիվությանը, կստեղծի ներդաշնակ կապ այն միջավայրի հետ, որտեղ ապրում է:

Լինելով տեղեկացված բնության երևույթների, նրանում կատարվող օրինաչափությունների մասին՝ սովորողը կարժևորի բնության մեջ և շրջակա միջավայրում վարքի կանոնների պահպանումը՝ չլինելով միայն սպառողի դերում:

Սովորողների էկոլոգիական իմացության գործում կարևոր դեր ունի այն վայրը, որտեղ ապրում է (գյուղ, քաղաք, մարզ), որի շնորհիվ կարժևորի և կդրսևորի հոգատար վերաբերմունք կենսաբանական օբյեկտների, բնության, հուշարձանների, անհետացող բույսերի և կենդանիների նկատմամբ: Իսկ այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է սովորողին մասնակից դարձնել բնության պահպանման միջոցառումներին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Հանրակրթական դպրոցում «Կենսաբանություն» առարկայի ուսուցումը, որպես միջնակարգ կրթության պարտադիր բաղադրիչներից մեկը, նպատակ է հետապնդում ապահովել բնության և կենդանի օրգանիզմների մասին սովորողների գիտելիքների ձեռքբերումը, դրանց ճանաչողության մեթոդների տիրապետումը, հմտությունների և կարողությունների, ինչպես նաև արժեքային համակարգի ձևավորումը:

Հետազոտությունս անց եմ կացրել Լիճքի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում: Դասապրոցեսի ժամանակ ուսումնական նյութին զուգահեռ փորձել եմ դիտարկել և խորացնել էկոլոգիական դաստիարակությանը վերաբերվող հարցերը:

Հետազոտության արդյունքում կպարզեմ որքանով է կենսաբանության դասընթացը ազդել սովորողի էկոլոգիական գրագիտության վրա և որքանով է սովորողը պատասխանատու վարք ցուցաբերում շրջակա միջավայրի նկատմամբ:

Հիմնական դպրոցն ավարտողին ներկայացնող արժեքային համակարգի բաղադրիչներն են.

1. Ունենա դրական վերաբերմունք կենդանի բնության, սեփական առողջության և այլ մարդկանց առողջության նկատմամբ:
2. Գիտակցի առողջ ապրելակերպի նորմերի պահպանման անհրաժեշտությունը:
3. Կարողանա բնության մեջ և շրջակա միջավայրում պահպանել վարքի կանոնները:
4. Ցուցաբերի հոգատար վերաբերմունք կենսաբանական օբյեկտների, բնության հուշարձանների նկատմանբ, մասնակցի դրանց պահպանման միջոցառումներին:

Աշխատանքին մասնակցել է Լիճքի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի (թվով մեկ) աշակերտը:

Հարցման միջոցով փորձել եմ պարզել աշակերտի մոտ էկոլոգիական գիտելիքների մակարդակը և աշխարհայացքը, արդյոք կենսաբանության դասընթացը նպաստել է բնության հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորմանը: Հետազոտության մեջ ներառել եմ հետևյալ հարցերը, որոնց միջոցով կկարողանամ պարզել սովորողի մոտ էկոլոգիական գիտելիքների մակարդակը և աշխարհայացքը:

1. Ի՞նչ է բնությունը:
2. Մարդը կարո՞ղ է վնասել բնությանը:
3. Ի՞նչ է նշանակում էկոլոգիական ճգնաժամ:
4. Բնությունը և մարդը կարո՞ղ են լինել բարեկամներ և թշնամիներ:
5. Երբևէ աղբ նետե՞լ ես ոռոգման ջրատարի մեջ:
6. Ինչպե՞ս կվարվես, եթե տեսնես, որ ձեր հարևանը աղբ է նետում ոռոգման ջրի մեջ:
7. Մեր շրջապատի բույսերն ու կենդանիներն ունե՞ն արդյոք պաշտպանության կարիք:
8. Կմաքրե՞ս ուրիշի թափած աղբը:
9. Կարևո՞ր է անտառների պահպանությունը բնության համար:

10. Փողոցով անցնելիս կամ այգում զբոսնելիս երբևէ պոկե՞լ ես ծառի ճյուղեր և ի՞նչ զգացողություն ես ունեցել այդ պահին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Բարձրացված հարցերին սովորողի տված պատասխանների ուսումնասիրությունից եկա այն եզրակացության, որ սովորողի վերաբերմունքը բնության հանդեպ փոխվել է: Եթե նախկինում աղբը նետում էր չնախատեսված վայրում, ապա հիմա, հասկանալով իր արարքի հետևանքները, այդպես չի վարվում, հակառակը, նման դեպքի ականատես լինելիս փորձում է գրագետ և ճիշտ խոսքով բացատրել արաքը կատարողին իր սխալը և խելացի քայլեր է առաջարկում, բնության պահպանության համար: Գիտակցում է, որ բնությանը վնասելով՝ վնասում է իրեն: Նա հասկանում է, որ պետք է չվնասել և չաղտոտել մեզ սնող մայր բնությունը:

Նոր ձևավորվող անհատի մեջ էկոլոգիական դաստիարակության, բնության պահպանության սերմանումը չպետք է սկսվի և ավարտվի դպրոցական գործընթացում: Այն իրենից ենթադրում է հատուկ կանոնակարգով մշակված քայլերի հաջորդականություն, որը մեզ պետք է ուղեկցի յուրաքանչյուր քայլափոխի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հասարակության կարևորագույն խնդիրն է բնության մեջ գոյություն ունեցող էկոլոգիական օրենքների իմացության հիման վրա, բնության խելամիտ օգտագործումն ու պահպանումը:

Բնության նկատմամբ մարդու գործնական և հոգատար վերաբերմունք հիմքը էկոլոգիական դաստիարակությունն է, շրջակա միջավայրի և այդ վերաբերմունքի համապատասխանեցում հասարակական նորմերին:

Էկոլոգիական դաստիարակությունը կախված է էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական մշակույթի և գիտելիքների մակարդակից:

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի հիմքում ընկած են սովորողների հոգեկան որակները, բնության նկատմամբ հետաքրքրությունը, արժեքային դիրքորոշումներն ու հարաբերությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հակոբյան Ս., «Մարդը և հասարակությունը», Գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Երևան, «AG print» տպ., 2016թ., 64 էջ:
2. Մարուխյան Լ., Հովսեփյան Ա., «Անձի էկոլոգիական կուլտուրան», Երևան, 2006թ., 367 էջ:
3. Մելքումյան Լ., «Էկոլոգիայի հիմունքներ», Երևան, 2008թ., 288 էջ:
4. Մկրտչյան Մ., «Մանկավարժություն», Գիտամեթոդական ամսագիր, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2017թ., 64 էջ: